

“Ինչպես ստեղծել հրաշալի բիզնես էջ Facebook-ում”

Ուղեցույց

Սկզբում նայենք, թե ինչու է ճիշտ բիզնես էջ ունենալ ֆեյսբուքում՝ Facebook Business Page. Դուք արդեն գիտեք, որ ֆեյսբուքն ամեն ամիս 2 միլիարդից ավելի ակտիվ օգտատերեր ունի: Անհնարին է արհամարհել այդ փաստը:

Ֆեյսբուքը մարդկանց համար շատ հեշտ է դարձրել գտնել ու կապ հաստատելը միմյանց հետ և ընկերությունների ու բիզնեսների հետ: Դա ստիպում է ընկերություններին մտածել ֆեյսբուքում ակտիվ լինելու մասին:

Եկեք նայենք, թե ինչպես մի քանի պարզ քայլերի միջոցով ստեղծենք ֆեյսբուքյան բիզնես էջ:

Քայլ 1. Ձեր բրաուզերում (Chrome, Yandex կամ այլ) մուտք գործեք հետևյալ հղումով. <https://www.facebook.com/pages/creation/>


Դիտողություն. Նույնը կարող եք անել, եթե ձեր անձնական էջում սեղմեք Create:



Կամ էլ մուտք գործեք <https://www.facebook.com/business> և սեղմեք վերևի աջ անկյունի փոքրիկ եռանկյունը, իսկ հետո՝ Create page:



Հենց որ մուտք գործեք էջերի ստեղծման էկրան, կտեսնեք երկու տարբերակ՝ “բիզնես կամ բրենդ” և “հասարակական կազմակերպություն կամ անձ”




Քանի որ այստեղ խոսքը գնում է բիզնեսների մասին, ապա սեղմեք ձախ կողմինը՝ Business or Brand:

Լրացրեք հետևյալ դաշտերը.



- Էջի անունը՝ Page name – ձեր էջին անուն վերագրեք;
- Տեսակը՝ Category – նկարագրեք թե ինչպիսին է ձեր էջը. Յեւս որ մեկ-երկու տառ հավաքեք անգլերեն լեզվով, Ֆեյսբուքն ինքը կառաջարկի տարբերակներ, ինչպես ներքևի նկարում.



Քայլ 2. Ավելացրեք լուսանկարներ

Այնուհետև Ֆեյսբուքը հուշում է, որ պետք է ավելացնել լուսանկարներ՝ Profile և Cover. Ներքևի սկարում կարմիր շրջանակների մեջ առած նկարներից ձախ և աջ կողմերին են համապատասխանաբար:



Որքան գեղեցիկ ընտրված լինեն լուսանկարները, այնքան ավել տպավորիչ ու գրավիչ կլինի ձեր բիզնեսի էջը:

Profile նկարի համար սովորաբար օգտագործում են բիզնեսի լոգոն: Լավագույն չափը 170 x 170 չափս է:

Cover նկարի համար լավագույն չափսը 820 x 462 չափսն է:

Սակայն, եթե ձեր դրած նկարները նշված չափսերի չեն, նույնպես հոգ չէ՝ Ֆեյսբուքը դրանք կցուցադրի իր նախընտրած չափով, այնպես որ պարզապես ձեր դրած նկարի մի մասը չի երևա: Հետագայում կարող եք դրանք փոփոխել, որքան ցանկանաք:

Հուշում. Cover նկարի տեղում կարող եք անգամ տեսանյութ կամ սլադերի հաջորդականություն տեղադրել:

Հենց որ սրանք լրացնեք, էջը կստեղծվի և կիրապարակվի:


Քայլ 3. Ամբողջությամբ լրացրեք էջի մասին տեղեկությունները

Հենց մեջտեղում, Ֆեյսբուքը կբերի մի քանի հուշում, թե ինչպես ճիշտ լրացնել էջի մասին տեղեկությունները: Սեղմեք “տեսնել բոլոր հուշումները” See All Page Tips և սկսեք լրացնել ըստ դրանց:


Նույնը կարող եք անել նաև, եթե սեղմեք Settings և Page Info:

Ի՞նչ պետք է լրացնեք.

- Նկարագրություն` Description – ինչի մասին է ձեր էջը, այստեղ կարող եք գրել առավելագույնը 255 տառ, ներառյալ բացատները
- Կատեգորիաներ` Categories – սրանք կօգնեն մարդկանց հեշտ գտնել ձեր էջը, կարող եք նշել մինչև երեք կատեգորիա
- Ձեզ հետ կապ հաստատելու տվյալներ` հեռախոս, վեբ կայք, էլփոստի հասցե
- Գտնվելու վայրը` ֆիզիկական հասցե, եթե ունեք այդպիսին
- Աշխատանքային ժամերը
- Ավելին` More – այստեղ կարող եք նշել ձեր գնային սահմանները, եթե ցանկանում եք:




Այստեղ գրվածները երևալու են ձեր էջի About մասում: Այդ մասում կարող եք նաև գրել ձեր բիզնեսի պատմությունը, պարզևների մասին, մենյուն և այլն:



Քայլ 4. Կարող եք փոփոխել ձեր էջի դասավորությունը


Կախված նրանից, թե ինչ բիզնես է ձերը, կարող եք ընտրել, թե ինչ ձևով ձեր գրառումները, սկարները և այլ տեղեկությունները դասավորված լինեն ձեր էջում. Ֆեյսբուքն առաջարկում է մի քանի ստանդարտ ձևաչափեր՝ Templates տարբեր տեսակի բիզնեսների համար: Կարող եք ընտրել հետևյալ ցուցակից.

- Shopping՝ առևտրի
- Business՝ բիզնեսի
- Venues՝ տարածքների
- Nonprofit՝ շահույթի նպատակ չհետապնդող
- Politicians՝ քաղաքական գործիչ
- Services՝ ծառայություններ
- Restaurants & Cafes՝ ռեստորաններ և սրճարաններ
- Video Page՝ տեսանյութերի էջ
- Standard՝ ստանդարտ:



Այնուհետև կարող եք ավելացնել, թե ինչ երևա տվյալ ձևաչափում Tabs: Ահա մի քանի տարբերակ.

- Offers – ձեր առաջարկները, օրինակ գեղջեր
- Services – ծառայությունները
- Shop – ապրանքատեսականիս
- Reviews – ձեր մասին հաճախորդների կողմից գրված կարծիքները
- Photos – էջի լուսանկարները
- Posts – գրառումները
- Videos – տեսանյութերը
- Live Videos – կենդանի տեսանյութերը
- Events – միջոցառումները
- About – ձեր մասին
- Community – ձեր այն ընկերները, ովքեր հավանել են ձեր էջը
- Groups – ձեր ֆեյսբուքյան խմբերը, որոնք կապված են այս էջին:




Քայլ 5. Ավելացրեք, թե ովքեր են կառավարելու էջը

Եթե թիմով եք կառավարելու էջը, ապա կարող եք ավելացնել տարբեր դերակատարումներ տարբեր մարդկանց համար: Ահա մի քանի հնարավոր դերակատարում:

- **Admin** – ադմին՝ կարող է իրականացնել ցանկացած գործողություն էջում՝ ունի բոլոր թույլտվությունները (էջը ստեղծողը սովորաբար այս դերակատարումն է ունենում)
- **Editor** – խմբագիր՝ կարող է խմբագրել էջը, ուղարկել նամակներ, գրառումներ կատարել էջի անունից, ստեղծել ֆեյսբուքյան գովազդ, գրել դիտողություն՝ քոմենթ, և նայել էջի վերլուծական մասը՝ Insights
- **Moderator** – մոդերատոր՝ կարող է պատասխանել քոմենթներին կամ ջնջել դրանք, կարող է տեսնել, թե որ ադմինը ստեղծեց գրառում կամ գովազդ, կարող է նայել էջի վերլուծական մասը՝ Insights
- **Advertiser** – գովազդող՝ կարող է տեսնել, թե որ ադմինը ստեղծեց գրառում կամ գովազդ, կարող ստեղծել գովազդ կամ կարող է նայել էջի վերլուծական մասը՝ Insights
- **Analyst** – կարող է տեսնել, թե որ ադմինը ստեղծեց գրառում կամ գովազդ և կարող է նայել էջի վերլուծական մասը՝ Insights:

Մրանք սահմանելու համար, Page settings-ից ընտրեք “Page Roles” մասը:




Քայլ 6. Ստեղծեք ձեր առաջին գրառումները

Սկսեք ստեղծել գրառումներ, դրեք լուսանկարներ, տեսանյութեր, ստեղծեք միջոցառում Event: Նոր դրված, թարմ բովանդակությունը ձեր էջի տեսքը դարձնում է գրավիչ և ստիպում է, որ մարդիկ հաճույքով գան ձեզ մոտ:

Ահա և ձեր ֆեյսբուքյան էջը պատրաստ է ներկայանալու մարդկանց:

Հաջորդ քայլում արդեն կարող եք սկսել ձեր ընկերներին հրավիրել հավանելու ձեր էջը, որպեսզի այդպիսով ձեռք բերեք ձեր առաջին հետևորդներին: Ֆեյսբուքն ինքն է առաջարկում ձեզ հրավեր ուղարկել ձեր ընկերներին.



Սակայն կարևոր է հիշել, որ եթե մարդիկ գան դատարկ էջ, ապա հետագայում էլ չեն ցանկանա հետ վերադառնալ ձեզ մոտ: Կարևոր է, որ մի քանի լավ գրառում արդեն ստեղծած լինեք, նախքան մարդկանց ձեր էջ հրավիրելը: